

**ՔՈՍԱԿԻ ՀԵՔԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
բարբառ (խոսվածք)**

Էլել ա, չի էլել, մի թագավոր: Թագավորն ուսեցիլ ա իրեք աղջիկ, էս ըիսկերանցը՝ ամենին մի օթախ խազինա:

— Ո՞վ որ օթաղն պահի, էդ խազինան իրան եմ տալի, ով դոչաղ չի, գողանալ կտա, նրան շատ բաժին չեմ տա:

Էդ երկու աղջկաց խազինեն գողացել են, գողացել են տարել: Պուճուր ըիսկանը մնացել ա:

Պուճուր աղջիկը ասել ա, որ.— Ինձ քաչալ ու քոսակի չի տաս:

Էկել ա մի քոսակ էդ ըիսկանը ուզում:

Թագավորն ասել ա, որ.— Չէ՛, տալ չեմ, իմ աղջիկս ինձ ասել ա, որ քաչալ ու քոսակի չի տաս:

Գնաց էդ Քոսակը իծի մագերից կըպրակ էրեսիցը մագ արավ, էկավ, որ՝ էս քոսակ չեմ, էկավ թագավորի մենձ աղջիկը ուզեց:

Պուճուրը ասեց.— Ես դրան չեմ ուզիլ:

Տարավ իրան տուն, մի թագի թուլա էփած, մի սինու միջի դրած:

Ասավ.— Եթե էդ շան թուլեն էված կերե՞լ էս, խո իմ կնիկն էս, չե՛ս կերել էս քեզ կուտեմ:

Էս աղջիկը չկել ըիգու լաց էլավ, էդ Քոսակը ըիգունն էկավ, էկավ տեհավ, որ էդ աղջիկը շան թուլեն կերել չի, ինքը կերավ էդ ըիսկանը:

Ըռավողը վեր կացավ, գնաց թագավորին ըսավ, որ.— Մենձ աղջիկը բեռանգ ա, միջնեկ աղջկանդ եմ ուզում:

Վի կալավ միջնեկ աղջկանը տարավ: Էս աղջիկը գնաց տեհավ, որ ո՛նչ քիր, ո՛նչ բան, օչով չկա:

Քոսակն օխա դուռը իրար միջի բաց անելով գնաց միջի տունը, էդ աղջիկն էլ եղնեն:

Էդ աղջիկը գնաց տեհավ, որ ոնչ քիր, ոնչ գատ. մի սինի, մի ջան թուլա էփած, միջին վեր դրած:

Ասավ.— Թե թուլեն կուտե՛ս, իմ կնիկն էս, էս էլ քեզ կըպահեմ, կուզեմ, թե չուտես խո՝ էս էլ ըիգունը գամ՝ քեզ կուտեմ, քու էրկու՛քրոջդ էլ էս կերել եմ:

Վեր ա կենում օխտը դուռը փակում, գնում չուր: էդ աղջիկը շատ լաց ա ըլլում էդ օրը:

— Աստվա՛ծ,— ասում ա,— թե իմ ստեղծելուն խաբար էս, էս հայ եմ, հայ քրիստոնյա, տեր աստվա՛ծ, դու ջնջի, վեր կործանե էս հարամ ջան թուլան:

Աստծուն դրա խոսքը դիր ա գալի: Գետինը էդ ա բացվում, սինին ու թուլեն նի են ընգնում:

Ըիգունը Քոսակը գալիս ա տենում, որ ոնչ սինի, ոնչ թուլա:

Ասում ա.— Ի՞նչ արիր:

Ասում ա.— Քու տունդ շինվի, քեզանե հենց վախեցի, սինին հետը կուլ տվի:

Ասում ա.— Ա՛յ դու իմ կնիկն էս:

Նրա էքսը Քոսակը գնաց չուր, էս հարսը մտիկ արավ, տեհավ մի բլանիք կախ արած. էդ բլանիքը վե կալավ, մի դուռը կար, բաց արավ: Բաց արավ, տեհավ միջին մի զարգար, մեկ էլ մի դուրգար:

Ասին.— Աստծո՞ սիրես, որ դուռը բաց էս արել, բաց արա մի ճանապարհ, դուն էլ մեր քիրը, մենք ըլինք քու աղբերը, մենք ընկնինք ճանապարհը, գնանք էս անօրենի ձեռիցը:

Դրանք վեր կացան, փետե տունիկ շինեցին, էդ ըղջկանը դրին միջին, առան գնացին թագավորի մոտ:

¹ Հավանաբար ասացողը շփոթել է՝ պետք է լինի՝ մենձ— Ծ. Կ.:

Ասին.— Թագավորն ապրած կենա, զարգար-դուրգար չե՞ս ուզի:

Ասավ.— Բարով, հազար բաբով էք եկե, խի՞ չենք ուզիլ:

Դրանք վեր էկան թագավորի ամարաթումը, էդ ըխչկանը ամեն հացահերթին էդ փետե տունիկի միջիցը հանում են, հետներնուն հաց են ուտացնում:

Օրին մի օր ըխչկանը ուտացնում են, էդ պահում են:

Ժամանակով թագավորի տղեն բրավուրդ արավ, դրանք մի սիրուն աղջիկ փետե տունիկի միջին պահած ունին:

Ասում ա.— Ջարգա՛ր դուրգա՛ր, էդ աղջիկը հանեցեք, ես պտիմ ուզիլ:

Էկավ թագավորի տղեն էդ ըխչկանը ուզեց: Ժամանակով էդ աղջիկը խտոր ընկավ, բերուց մի տղա:

Էդ Ջարգար-դուրգարը էդ ըխչկանը տվին մի փունջ վարդ, մի փունջ մանուշակ:

Ասին.— Պիի՛, քեզ մի ժամանակ պետք կգա:

Դրուց ըբխի գլխի տակին:

Էդ Քոսակը պտտվելով էկավ թագավորի դուռը, էդ ըխչկանը ճնաչեց, որ «Ա՛յ պզտի հարսն ա, Ջարգար-դուրգարն էլ կըշտին ա»:

Ասավ.— Թագավորն ապրած կենա, նոքար չե՛ս ընդունիլ ինձ:

Կնիկը ասավ.— Ձեռը վեկալ, դրան նոքար մի բռնիլ, դրանից մենք խաթա կքաղենք:

Մարդը անկանջ չարավ: Դրան բռնեց նոքար: Դրան բռնեց նոքար, դա գնաց դուքանիցը քարթու գինի առավ: Գինին բերուց էդ խալխին քարթու գինի խմացրուց: Էդ խալխը հարբեցին, վեր դառան:

Դա էս հարսին ասավ.— Գնա ձեր եզը դուս պի: Հարսը վախելեն գնաց եզը դուս պերուց տվուց իրան:

Ասավ.— Ձեր վենձ պղինձն էլ պի:

Գնաց վախելեն պղինձ բերուց տվուց իրան:

Տարավ հեռու չուումը մի թեժ կրակ արավ, էդ ընգնանին դրուց կրակին վրա:

Ասավ.— Էդ եզը դուս արա, լքցրու ձեր ընգնանին:

Էդ ընգնանին էդ եզը լավը հալվեց, էփում ա կրակին վրա:

Էկավ հարսին ասավ.— Ղու էլ գնանք:

Ճամբին հարսը ասավ.— Կանգնի, մի ես գնամ ըբխին տենամ, գամ:

Դրան խաբեց, ըբխին մտիկ չարավ, էկավ վեր. «Ջարգա՛ր դուրգա՛ր, Ջարգա՛ր-դուրգա՛ր».— կանչեց:

Ասավ.— Չո՛ռ, ցա՛վ, ըբխիդ գլխի տակինը կրակ գցի:

Դա վախելեն իմացավ ոչ: Վե կացավ էդ գնաց: Գնաց հասավ Քոսակին:

Մին էլ ասավ.— Քոսակ, աստված սիրես, թող գնամ թագավորի տղին բարևեմ ու գամ:

Էկավ էլի դի արեց.— Ջարգա՛ր-դուրգա՛ր, Ջարգա՛ր-դուրգա՛ր:

Էլի ասավ.— Չոռ, ցավ, ըբխիդ գլխի տակինը կրակ գցի:

Դա նոր հասկացավ, ըբխի գլխի տակի վարդն ու մանիշակը գցեց կրակը, որ գցեց կրակը, դրա ծխիցը խալխը վրա նստեցին:

Էն ժամանակ, որ վրա նստեցին, թագավորն ասավ.— Էս ի՞նչ բան էր:

Ասավ.— Գլուխդ մեռնի, քեզ չե՞ս ասի, թե Քոսակին նոքար մի բռնի՛լ, մենք կորած ենք, վնաս կքաջենք:

Թագավորն ասավ.— Բա Քոսակն ո՞ւր ա:

Ասում ա.— Ո՞ր պտի ըլլի, մեր եղիցը տարել ա մեր հանդումը կրակ արել, մեր մենձ պղինձը տարել ա դրել կրակին, մեր եղերը մեջը լքցրել, որ ինձ տանի տկլորի, կոխի եղ եղի մեջը:

Եղումն ինձ էփեր, էրեր:

Թագավորն ասավ.— Մենք էլի եղ թուլ կլինք, թող Քոսակը գա, էլ դու մի վախիլ:

Քոսակն էկավ ասեց.— Ղու իլ գնանք:

Էղ ժամանակ վի կացան դրանք, Քոսակին բռնեցին տարան:

Ասին.— Որդի՞ էս կրակ արել: Ղու իլ գնանք վառած կրակիդ կուշտը:

Տարան իրան կրակի կուշտը:

Ասին.— Շորերդ հանի՛:

Տկլորեցրին, կոխեցին իրան էփած եղի մեջը:

Էրեցին, վեր գցեցին:

Էկան իրան տուն, թագա նորից մակարիճ արին, կերան, խրմեցին, քեֆ արին, որ մեր թշնամու հախիցը էկան:

Նրանք հասան իրանց մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին:

Աստձանե իրեք խնձոր կախ էլավ. մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ ալամ աշխարհին: